

**ԵՂԻՇԵՒ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԵՐԿԻ՝
ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՉԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ**

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Հայ լեզվաբանության մեջ գրաբարի դարձվածքների նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է հատկապես 21-րդ դարի սկզբներից¹, թեև դարձվածաբանության՝ իբրև առանձին գիտակարգի առանձնացումը և տեսության ձևավորումը տեղի է ունեցել 1950-ականներին²: Ընդունված է ասել, որ դա մասնավորապես պայմանավորված էր ռուս լեզվաբանության մեջ դարձվածաբանության զարգացմամբ, որին այն ժամանակ մեծապես հետևում էր հայ լեզվաբանությունը: Իհարկե, հայերենի դարձվածքները շատ վաղ պատմություն ու կիրառություն ունեն, իսկ նրանց՝ իբրև յուրօրինակ, ինքնուրույն միավորների առանձնացումն արդեն տեսնում ենք 18-րդ դարի բառարաններում³, առաջին տեսական դրույթները՝ Ա. Այտընյանի, Մ. Աբեղյանի աշխատություններում⁴, սակայն ինքնուրույն գիտակարգը և ամբողջական տեսությունը ստեղծվում են 20-րդ դարում արևելահայերենի դարձվածքների քննությամբ: Հարաբերականորեն կարճ ժամանակում կազմվում է արդի հայերենի դարձվածաբանական բառարան, կատարվում են տարբեր ուսումնասիրություններ:

¹ Գրաբարի դարձվածքների վերաբերյալ գրվել են մի շարք գրքեր, հոդվածներ, օրինակ՝ **Լ. Խաչատրյան, Լ. Ավետիսյան**, Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Եր., 2015, **Ա. Աբաջյան, Ք. Հարությունյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի դարձվածքները (կառուցվածքային քննություն), «Աբեղյանական ընթերցումներ», 2, Եր., 2018, էջ 19-30, **Ա. Աբաջյան, Ա. Յուզբաշյան**, Դարձվածային միավորները դավանաբանական թղթերում, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, № 1 (31), էջ 51-61, **Ն. Դիլբարյան**, Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» գրաբար բնագրի դարձվածքների քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2012, 2 (29), էջ 63-78, **Ք. Հարությունյան**, Դարձվածքները Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց» երկում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2016, էջ 119-125 և այլն:

² Տե՛ս **Ի. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 5:

³ Օրինակ՝ Մ. Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի»-ում (հտ. Ա., Վենետիկ, 1749) առանձին տրված են «ակն արկանեն», «ակն ունիս», «զմտաւ ածեմ» և այլն:

⁴ Տե՛ս **Ա. Այտընեան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 317-320, **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, 2 հտ., Եր., 1974, էջ 124-126:

Հայոց լեզվի զարգացման մյուս փուլերի՝ գրաբարի և միջին հայերենի դարձվածքների քննությունը նույն կերպ չի ընթանում, կարելի է ասել՝ անգամ նույն ուշադրությանը չի արժանանում: Ճիշտ է, տարբեր առիթներով լեզվաբանները անդրադառնում են նաև գրաբարի դարձվածքներին, բայց դրանք, շատ քիչ բացառություններով, հիմնականում ակնարկային են՝ արևելահայերենի հետ որոշ համեմատություններ կատարելու և ոչ թե գրաբարի դարձվածային համակարգն իբրև առանձին միավոր քննելու խնդիր ունենալով⁵: Անգամ գրաբարի դարձվածքների առանձին բառարանը տպագրվել է 2012 թ.⁶, այնինչ արդի հայերենի դարձվածքների բառարաններ տպագրվել են 1975 թ.⁷ և 2011 թ.⁸, չհաշված բազմաթիվ ուսումնական դարձվածաբանական բառարանները: Այս վիճակը փոխվում է 21-րդ դարում, երբ և՛ գրաբար երկերի լեզվառճական ուսումնասիրություններում (ատենախոսություններ, մենագրություններ, հոդվածներ), և՛ առանձին տեսական հարցերի քննության ժամանակ առաջ է գալիս նաև գրաբարի դարձվածքների ուսումնասիրության խնդիրը:

Մեր հոդվածը նվիրված է գրաբարի դարձվածքների որոշման ու առանձնացման տեսական մի քանի խնդրի՝ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկում կիրառված և գրաբարյան բառարաններում չարձանագրված դարձվածքների օրինակով, որով հույս ունենք նպաստելու ինչպես Եղիշեի երկի բառապաշարի, այնպես էլ գրաբարյան դարձվածքների իրական պատկերի ամբողջացմանը:

Ուսումնասիրելով Եղիշեի երկի դարձվածքները՝ պարզեցինք, որ թեև նրանց մեծ մասը (շուրջ 200 դարձվածք) ներկայացված է ինչպես գրաբարի դարձվածաբանական, այնպես էլ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»⁹ և գրաբարի նորահայտ բառեր պարունակող բառարաններում¹⁰, սակայն կան որոշ դարձվածքներ, որոնք արձանագրված չեն դրանցում: Մեր խնդիրն է այս միավորների իմաստային ու կառուցվածքային քննությամբ ցույց տալ դրանց դարձվածք լինելը և արձանագրել դրանց գոյությունը՝ ի լրումն հետագայում կազմվելիք գրաբարի լիակատար դարձվածաբանական բառարանի: Ընդ որում՝ այս միավորների մեջ կան

⁵ Այս մասին տե՛ս **Ք. Հարությունյան**, Գրաբարյան ոճերն ու դարձվածքները և դրանց քննությունը հայ լեզվաբանության մեջ, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ գիտաժողովի զեկուցումներ», Եր., 2015, էջ 107-115:

⁶ Տե՛ս **Ռ. Ղազարեան**, Գրաբարի դարձվածաբանական բառարան, Եր., 2012:

⁷ Տե՛ս **Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

⁸ Տե՛ս **Պ. Քեղիքյան**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Եր., 2011:

⁹ Տե՛ս **Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. Ա, 1836, հ. Բ, 1837 (այսուհետ՝ ՆՀԲ):

¹⁰ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, **Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան**, Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007:

ինչպես արդեն հայտնի գրաբարյան դարձվածքների չարձանագրված տարբերակներ, այնպես էլ միանգամայն նոր դարձվածքներ:

Քանի որ գրաբարյան դարձվածքների քննությունը մեծ պատմություն չունի, որոշ տեսական հարցեր ու խնդիրներ դեռևս լուծված չեն: Աշխատանքի իրականացման ժամանակ առաջացած գլխավոր խնդիրը հետևյալն էր՝ ինչպե՞ս, ի՞նչ սկզբունքներով պետք է կատարել կապակցությունների առանձնացումը և որոշել դրանց դարձվածք լինելը, եթե արձանագրված չեն բառարաններում: Մանավանդ գրաբարյան դարձվածքներն այլևս գոյություն չունեն արևելահայերեն լեզվակրի բառապաշարում՝ իբրև պատրաստի, վերարտադրելի միավոր, որպիսին եղել են հայոց լեզվի զարգացման գրաբարի փուլում, և որպիսիք են այժմ ժամանակակից հայերենի դարձվածքները: Հետևաբար, դրանց առանձնացումը լինելու է ոչ թե սովորական, ինքնին այդպիսին ընկալվող-համարվող միավորի մատնանշում, որը գոյություն ունի մեր լեզվամտածողության մեջ, այլ որոշակի հիմունքով կատարվելիք գործողություն:

Անշուշտ, նախ հիմք ենք ընդունել սահմանումը, որում տրվում են սովյալ երևույթի էական, ընդհանրական և տարբերակիչ հատկանիշները: Ըստ հայ լեզվաբանության մեջ այսօր առավելապես տարածում գտած ըմբռնման՝ դարձվածք է «2 կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ հասկացություն արտահայտող վերախմաստավորված և վերարտադրելի կայուն բառակապակցությունը»¹¹: Այսինքն՝ կառուցվածքային տեսկետից այն պետք է լինի բառակապակցություն, իմաստային տեսակետից՝ արտահայտի մեկ ամբողջական իմաստ, որը պետք է լինի բառակապակցության ոչ թե ուղիղ, այլ նոր, փոխաբերական իմաստը:

Ինչ վերաբերում է պատրաստի, վերարտադրելի միավոր լինելուն, ապա գրաբարի դարձվածքների համար այս հատկանիշը կարելի է պարզել գտնելով սովյալ կապակցության նույն իմաստով կիրառություններ գրաբարյան այլ երկերում: Բայց գտնել որևէ միավորի կիրառություն այլ երկում, առավել ևս եթե այն արձանագրված չէ բառարաններում, շատ դժվար է. որքան էլ կան 5-րդ և հաջորդող դարերի խիստ սահմանափակ թվով երկերի համաբարբառներ, սակայն դարձվածքները համաբարբառներում որպես կանոն կա՛մ առանձին ներկայացված չեն, կա՛մ մասամբ են ներկայացված: Ուրեմն որևէ կապակցություն համաբարբառում գտնելու համար պետք է փնտրել այդ կապակցությունը կազմող բառերից յուրաքանչյուրի օրինակներում, հետևաբար՝ առնվազն 2 բառա-

¹¹ **Խ. Բաղիկյան**, նշվ. աշխ., էջ 89: Հմնտ. **Պ. Բեդիրյան**, ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 5, **Գ. Ջահուկյան**, **Էդ. Աղայան**, **Վ. Առաքելյան**, **Վ. Քոսյան**, Հայոց լեզու, Եր., 1980, էջ 47, **Ա. Մուքիասյան**, ժամանակակից հայոց լեզու, Եր., 2004, էջ 296:

հողվածում: Վերջին շրջանում էլեկտրոնային որոնողական համակարգերով կարելի է աշխատանքը փոքր-ինչ արագացնել, սակայն լիակատար որոնում ամեն դեպքում դեռ հնարավոր չէ կատարել: Ուստի տվյալ կապակցության այլ կիրառություն գտնելը և դրա հիման վրա եզրակացություն կատարելը առայժմ լիարժեք հնարավոր չեն (եթե ուղղակի պատահմունքով չի հաջողվում) երկու գլխավոր պատճառով՝

ա. գրաբարյան բոլոր երկերի համաբարբառների կամ որոնման համար հատուկ մշակմամբ էլեկտրոնային տարբերակների բացակայություն,

բ. տեխնիկապես այդքանը կարճ ժամանակում արագ անելու անհնարինություն:

Ասվածը բացատրենք օրինակով. Եղիշեի երկում գործածված «արին հեղուկ» դարձվածքը գրաբարյան բառարաններում արձանագրված չէ. բայց դա պարզելու համար նախ պետք է ստուգել առնվազն ՆՀԲ-ն և գրաբարի վերջին շրջանում կազմված բառարանները (1-ին ստուգում): Ապա «արին» կամ «հեղուկ» բառահողվածներում պետք է փնտրել՝ կա՞րողոք այս կապակցության այլ օրինակ (2-րդ ստուգում): Եթե բառարաններից որևէ մեկում պատահաբար բերված չլինի այլ կիրառության օրինակ, ուրեմն պետք է այն փնտրել գոնե եղած համաբարբառներում (մոտ 20), ընդ որում՝ դարձյալ ինչպես «արին», այնպես էլ «հեղուկ» բառերի ներքո (3-րդ ստուգում): Սակայն այս ամենից հետո այլ օրինակ չգտնելը դեռ հիմք չի տա ասելու, որ այն իրոք գոյություն չունի, քանի դեռ մենք չենք ստուգել գրաբարով ավանդված ողջ մատենագրությունը, ինչն այսօր գործնականում անհնար է: Խնդիրն ավելի ժամանակատար ու բարդ է 2-ից ավելի բաղադրիչով կապակցությունների դեպքում:

Այսպիսով, մի կողմից տեսականորեն հնարավոր է պարզել տվյալ կապակցության գոյությունն այլ երկում, մյուս կողմից դա գործնականում դեռևս բավականին աշխատատար ու ժամանակատար, երբեմն էլ վերջնական արդյունք չտվող աշխատանք է: Եվ եթե դարձվածքների մի մասի համար այս եղանակով կարելի է քննություն կատարել, ապա մյուսի համար՝ ոչ: Ամեն դեպքում, մեր աշխատանքում փորձել ենք հնարավորինս ստուգել նրանց կիրառությունը 5-րդ դարի երկերից Ագաթանգեղոսի, Կորյունի, Եզնիկի, Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ղ. Փարպեցու երկերի և Աստվածաշնչի համաբարբառներով:

Կարծում ենք ժամանակի ընթացքում կազմված գրաբարի դարձվածքների լիակատար շտեմարանի (կամ նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ ամբողջ մատենագրության մեջ որոնում կատարելու հնարավորության) միջոցով այնուամենայնիվ հնարավոր կլինի պարզել այս կամ այն դարձվածքի կիրառության քանակը ևս, ինչի շնորհիվ կհերքվի դրանց մի մասի եզակիությունը, և կհաստատվի դրանց դարձվածք լինե-

լը կամ հակառակը: Իսկ մինչ այդ պետք է զգուշորեն քարտազրել երկերի դարձվածքները կամ վերախմաստավորված կապակցությունները՝ հնարավորինս բաց չթողնելով որևէ միավոր, որպեսզի այն իր հերթին այլ միավորի կորստի պատճառ կամ սխալ տեղեկության աղբյուր չդառնա:

Բացի դարձվածքի սահմանումից բխող կառուցվածքախմաստային հատկանիշներով առաջնորդվելուց, որն ամեն դեպքում թերի կլինի, եթե չհաջողվի գտնել գոնե մեկ այլ կիրառություն, կապակցության դարձվածք լինելը որոշելու համար առաջարկում ենք արդի հայերեն դարձվածքների հետ համեմատության և համաբանության մեթոդը: Մաթեմ չի բխում դարձվածքի սահմանումից կամ նրա էական հատկանիշներից, բայց կարող է լինել օժանդակ, օգնող միջոց: Այն ոչ մի դեպքում չի փոխարինում վերը նշված 3 սկզբունքներին, սակայն միայն 3-րդի բացակայության դեպքում կարող է կապակցությունը դարձվածք համարելու լրացուցիչ հիմք լինել: Այսպես, որքան էլ արդի հայերենի դարձվածքների համար աղբյուր են առավելապես աշխարհաբարի խոսակցական լեզուն և բարբառները, որքան էլ դարերի ընթացքում փոփոխվել են նաև հայերեն լեզվամտածողությունը և այն արտահայտող դարձվածքները, սակայն որոշ դեպքերում հստակ գուգահեռներ ու իմաստային նույնություններ կարելի է գտնել գրաբարի և արդի հայերենի դարձվածքների միջև: Օրինակ՝ Եղիշեի երկում կիրառված «բարկություն սրտմտության հեղուկ» կապակցությունը կարելի է դարձվածք համարել՝ հիմնվելով նաև այն փաստի վրա, որ նույնիմաստ և գրեթե նույն կազմությամբ դարձվածք կա արդի հայերենում՝ «բարկությունը մեկի վրա թափել» կամ՝ նույն կերպ՝ «համարս տալ» գրաբարում և «հաշիվ տալ» արդի հայերենում և այլն:

Արդ, հաշվի առնելով քննարկված խնդիրները՝ Եղիշեի երկում կիրառված փոխաբերական իմաստով այն կապակցությունները, որոնք արձանագրված չեն գրաբարի նշված բառարաններում, ներկայացնում ենք 3 խմբով:

ա. Միավորներ, որոնք բառարաններում արդեն արձանագրված դարձվածքների տարբերակներ են¹²:

բ. Միավորներ, որոնք դարձվածքներ են՝ համապատասխան հիմնավորմամբ: Բավարարվում ենք կիրառության գոնե մեկ այլ օրինակ բերելով՝ նպատակ չունենալով բոլոր օրինակները գտնել կամ մատնանշել՝ ընդ որում՝ նախ ներկայացնում ենք այն դարձվածքները, որոնց կիրառության օրինակ այլ երկից ևս բերել ենք, ապա մյուսները, որոնց այլ օրինակ թեև չենք գտել, բայց կա դրանց արդի հայերեն համարժեքը:

¹² Դարձվածային տարբերակները նույն իմաստով, ոճական ու շարահյուսական դերով, հիմնական կազմով դարձվածքներն են, որոնց բաղադրիչներից մեկը փոխարինված է համարժեք բառաձևով կամ բարբառային, փոխառյալ և այլ համարժեքով, օրինակ՝ աչքին չհավատալ – աչքերին չհավատալ, արյունը եռալ – արյունը եռ գալ, ավելի մանրամասն տե՛ս **Պ. Տեղիքյան**, նշվ. աշխ., էջ 213-216, **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 307-311:

զ. Միավորներ, որոնց դարձվածք լինելը վերջնականապես հնարավոր չէ ապացուցել (գուցե հեղինակային պատկերավոր արտահայտություններ են կամ ուղղակի փոխաբերական իմաստով կիրառություններ, որոնք այդպես էլ չեն ընդհանրացել), սակայն արդեն նշած պատճառով ներկայացնում ենք՝ հետագա քննությանը թողնելով հստակ տարրորոշումը:

Քարտագրել ենք Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկի՝ «Մատենագիրք հայոց» մատենաշարով հրատարակված բնագիրը¹³. օրինակների կողքին փակագծում տալիս ենք գրքի համապատասխան էջը:

Ա. Գրաբարի բառարաններում ներկայացված դարձվածքների տարբերակներ

1. ԶԱՆԶՆ Ի ՄԱՀ ՄԱՏՆԵԼ – իրեն մահվան վտանգի ենթարկել. «Վասն որոյ եւ նոքա զանձինս ի մահ մատնեցին՝ ոչ ինչ զանգիտելով իբրեւ զանարի վատասիրտս» (էջ 568): Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «զանձն ի մահ դնել» դարձվածքը՝ «իրեն մահվան վտանգի ենթարկել» իմաստով, որի տարբերակ կարելի է համարել «զանձն ի մահ մատնելը»: Ղ. Փարպեցին ևս ունի նման օրինակ. «...եւ տալ զանձինս ի մահ ի վերայ սուրբ եւ ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի...»¹⁴ (էջ 2260): Հաջորդ միավորը ևս այս դարձվածքի տարբերակ է:

2. ՏԱԼ ԶԱՆԶՆ Ի ՄԱՀ – իրեն մահվան տալ. «...որ փոխանակ մեր, ասեն, ետուն զանձինս ի մահ...» (էջ 746):

3. ԼԻՆԵԼ ԸՆԴ ԶԵՌԱՄԲ (ոմամբ) – մեկի ենթակայության տակ լինել. «...եւ զունդս երկրորդ ընդ իմով ձեռամբ Է...» (էջ 605), «...կոչեր եւ զբազումս ի զարագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ...» (էջ 653): Մա գրաբարի դարձվածաբանական բառարանում արձանագրված «ի ձեռոյ, ձեռս, ձեռին լինել (ուրուք)» (մեկի ենթակայության, տրամադրության տակ լինել) դարձվածքի տարբերակ է: Արդի հայերենում ևս կա նույնիմաստ «ձեռքի տակ լինել/ունենալ» դարձվածք¹⁵:

4. ՅԱՆԴՈՐՐ ՀԱՆԵԼ – ազատել, խաղաղության մեջ լինել. «Չոր եւ դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրելեաց մերոց, որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրէք վասն յանդորր հանելոյ» (էջ 637): Գրաբարի դարձվածաբանականում կա «յանդոր ելանել» (խաղաղության մեջ լինել), ընդ որում՝ Եղիշեի երկի որոշ սկզբնաղբյուր ձեռագրերում «յանդորր հանել»-

¹³ Տե՛ս Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին («Մատենագիրք հայոց», Ա. հտ., Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 521-764:

¹⁴ Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց («Մատենագիրք հայոց», Բ. հտ., Ե. դար) Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201-2376:

¹⁵ Արդի հայերենի դարձվածքները բերում ենք Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, «Ժամանակակից հայերենի դարձվածքների բառարան»-ից առանց հղումի, երբեմն Պ. Քեղիքյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան»-ից նշելով այն զանազանելու համար:

ի փոխարեն «յանդորր ելանել» է կիրառված, ինչը նշված է բնագրում:

Բ. Գրաբարի բառարաններում չարձանագրված դարձվածքներ

1. ԱԿԱՆՁԱԻՔ (հյրեանց) ԼՍԵԼ – անձամբ լսել, իմանալ. «...եւ ականջաւք իրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իրեանց» (էջ 761): Ղ. Փարպեցին ևս գործածել է՝ «...կամիմք, զի ինքն տեսցէ իւրովք աչաւք, եւ ինքն լուիցէ իւրովք ականջաւք» (էջ 2355): Արդի հայերենում կա «ականջով լսել» նույնիմաստ դարձվածք:

2. ԱՆ ԱՆԿԱՆԵԼ Ի ՎԵՐԱՅ (ումեմն) – վախը պատել, համակել. «...եւ ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն» (էջ 594): Կիրառված է Ղևոնդ Երեցի երկում. «Եւ ահ մեծ անկանէր ի վերայ Սառակինոս գնդին...»¹⁶: Արդի հայերենում կա «ահ ընկնել (իմ, քո, նրա մեջ)» (վախենալ, երկյուղել):

3. ԱՆԿԱՆԵԼ ՅԱԽՏՍՍ – հիվանդանալ. «Եւ իբրեւ այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս... ջեռաւ փոր նորա...» (էջ 683): Սեբեոսի «Պատմութեան» մեջ գործածված է՝ «Քանզի Ռշտունեաց տէրն անկաւ յախտս հիւանդութեան»¹⁷ (էջ 561), իսկ Փավստոս Բուզանդն ունի «անգեալ դնէր յախտս սաստիկ հիւանդութեան...»¹⁸ (էջ 683):

4. ԱՆԿԱՆԻԼ ԳՈՒԹ Ի ՍԻՐՏ – գթալ. «Նովաւ անկանի գութ յԱստուծոյ ի սիրտ թագավորին» (էջ 746): Աստվածաշնչում կիրառված է «գութ անկանել»՝ «...զի գութ անկցի, եւ զաւակ խառնեսցի» (Բ. Մկր., ԺԴ. 25), իսկ գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «գութ արկանել» (գութը շարժել):

5. ԱՆԿԱՆԻԼ Ի ՁԵՌՄ – ձեռքն ընկնել, բռնվել. «...անկանիմք ի ձեռս անաւրէն իշխանացոյ» (էջ 664, նաև էջ 692): Սեբեոսը կիրառել է «Պատմութիւն» երկում՝ «Վասն այնորիկ, զի մի անկցիս ի ձեռս մանկտւոյ իմոյ եւ մեռանիցիս» (էջ 455): Արդի հայերենում կա նույնիմաստ «ձեռքն/ը ընկնել» դարձվածք:

6. ԱՉՔ ՄՏԱՅ – ներքին զգացողություն. «Արդ, եթէ կամիս ուսանել զճշմարիտն, քաղցրացո գդառնութիւն սրտիդ եւ բաց զաչս մտացո» (էջ 718): Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ում կա՝ «Եւ որոց իցեն աչք մտաց եւ չեն կուրացեալ ի հաւատոցն...» (էջ 322): Արդի հայերենում ևս կա «մտքի աչք» դարձվածք՝ «ներքին զգացողություն» իմաստով:

7. ԱՍԵԼ ԸՆԴ ՄԻՏՍՍ – ինքն իրեն մտածել, խորհել. «...եւ ասէր ընդ

¹⁶ **Ղևոնդ Երեց**, Պատմաբանութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի որին, թէ որպէս եւ կամ որով արինական տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ հայոց ազգիս («Մատենագիրք հայոց», Զ. հտ., Ը. դար), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 735-854:

¹⁷ **Սեբեոս**, Պատմութիւն («Մատենագիրք հայոց», Դ. հտ., Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 453-565:

¹⁸ **Փավստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց («Մատենագիրք հայոց», Ա. հտ., Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 277-428:

միտս իւր...» (էջ 690): Փափստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ում
ևս օրինակ կա՝ «Ապա յորժամ լսէր մարդպետն Դղակ, մեծապէս
խնդացեալ ասէր ընդ միտս իւր...» (էջ 386): Արդի հայերենում ևս կա
«մտքումն ասել» դարձվածք:

8. ԱՐԻՒՆ ՀԵՂՈՒԼ – արյուն թափել, սպանություն գործել. «...եթէ ա-
ռանց բազում արիւն հեղլոյ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ»
(էջ 590, նաև էջ 686): Կիրառված է Աստվածաշնչում՝ «Մի հեղցուք արիւն»
(Ծնունդք, ԼԷ. 22): Արդի հայերենում ևս կա «արյուն թափել» դարձվածք:

9. ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ՍՐՏՍՏՈՒԹԵԱՆՆ ՀԵՂՈՒԼ – բարկությունն ու
զայրույթը արտահայտել, սաստիկ բարկանալ. «Յայնժամ զբոլոր բար-
կութիւն սրտմտութեանն եհեղ յայրն երանելի...» (էջ 533): Կապակցու-
թյունը վերախմաստավորված է, կիրառված է նաև Աստվածաշնչում. «Ա-
հա զբարկութիւն իմ եւ զսրտմտութիւն իմ հեղից ի վերայ տեղոյոյ այդ-
միկ» (Երեմ., Է. 20): Արդի հայերենում արձանագրված է «բարկությունը
թափել մեկի վրա»:

10. Ի ԲԵՐԱՆՈՅ ԵԼԱՆԵԼ – ասել. «Չիք այդր բան անելի կամ պա-
կաս, որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է» (էջ 753, նաև էջ 715): Գործածված է
նաև Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ում՝ «...զարմացեալ... ընդ
շնորհ աջողութեանն բանիցն, որ ելանէին ի բերանոյ նորա» (էջ 2367):
Արդի հայերենում ևս կա «բերանից դուրս գալ» (ասել, խոսել) դարձվածք:

11. Ի ԶԵՌԻՆ ՈՒՆԻՄ – ձեռքում պահել, ձեռքի տակ ունենալ. «...եւ
յորժամ գնոսա ի ձեռին ունիցիմք, չիք ոք որ եղծանել կարէ զհրամանն
արքունի» (էջ 591): Կիրառված է Փափստոս Բուզանդի «Պատմութիւն Հա-
յոց»-ում՝ «...եւ ունի գտիեզերս ի ձեռին իւրում եւ զամենայն բնակիչս նո-
րա իբրեւ զմարախ...» (էջ 382): Արդի հայերենում կա համարժեք «ձեռ-
քում պահել – իրենից կախման մեջ թողնել, տնօրինող լինել» դարձվածք:

12. ԻՆՔԵԱՆՔ ԻՆՔԵԱՆՑ ԶԵՌԱԻՔ – սեփական ուժերով. «...ինքեանք
ինքեանց ձեռաք զկրակատունսն այրէին» (էջ 599): Գործածել է նաև Փ.
Բուզանդը՝ «...թէ զկարդ մեռա յերկրին Խուժաստանի յԱնդաշըն բերդին
ինք ինքեամբ ձեռք...» (էջ 387): Արդի հայերենում կա «ինքն իր ոտով» (իր
հոժար կամքով, հոժարությամբ, առանց մեկի օգնության) դարձվածք,
կարծում ենք՝ սրա համաբանությամբ դարձվածք կարելի է համարել նաև
«ինքն իր ձեռքով»-ը թե՛ գրաբարի, թե՛ արդի հայերենի համար:

13. ԻՆԵԼ Ի ԲԱՆԻ (ուրումն) – համամիտ լինել, նույն մտքի լինել.
«Կոչեր առ ինքն զՎասակ, եւ ոքք ընդ նմա իշխանք ամենեքեան... եւ
զաւրացն, որ ի նորա բանի էին» (էջ 630): Սեբեոսը ունի՝ «Դուք ասէք գնո-
սա տեղապահս Աստուծոյ, ապա ոչ է պարտ լինել այդմ բանի» (էջ 526):

14. ԽՆՈՒԼ ԲԵՐԱՆ – մեկին լռեցնել, թույլ չտալ, որ խոսի. «Եւ ան-
դէն շիջանէր ի բազմաբոց բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար
խրատտուացն, որ անդադար յորդորէին զնա ի գործ դառնութեան» (էջ
616): Կապակցությունը կիրառել է նաև Ղազար Փարպեցին «Պատմու-

թին Հայոց» երկում՝ «...սակայն եւ այնպէս խնուլ զբերանս չարախաւսեացն ոչ կարէր» (էջ 2332): Արդի հայերենում էլ կա համարժեք «բերանը փակել» դարձվածք:

15. ՀԱՄԱՐՄ ՏԱԼ – պատասխան տալ արածի համար. «...մանաւանդ զի եւ առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ» (էջ 548): Այս կապակցությունը մի քանի անգամ կիրառված է նաև Աստվածաշնչում. «Ապա ուրեմն իւրաքանչիւր որ ի մէնջ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ» (Թուղթ առ Հռովմայեցիս, ԺԴ. 12), իսկ արդի հայերենում՝ նույն իմաստով, «հաշիվ տալ»:

16. ՏԵՄԱՆԵԼ ԱԶԱԻՔ (ումամբ) – անձամբ տեսնել. «Տեսաք աչաւք մերովք» (էջ 634), «Ձերոյին աչաւքդ տեսէք» (էջ 711), «Աչաւք իմովք տեսի» (էջ 721, նաև էջ 760, էջ 589): Այս կապակցությունը կա նաև Ղ. Փարպեցու երկում՝ «...տեսցէ իւրովք աչաւք» (էջ 2355): Արդի հայերենում կա նույնիմաստ «աչքով տեսնել» (անձամբ տեսնել) դարձվածք:

17. ՏԵՄԱՆԵԼ ԱՐԵԻ – ապրել. «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, եւ կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեաց» (էջ 663): Կապակցությունը օգտագործել է նաև Ղազար Փարպեցին «Պատմութիւն Հայոց» երկում՝ «...եւ նոքա կեան եւ զարեւ տեսանեն...» (էջ 2283): Արդի հայերենում ևս կա «արև տեսնել» դարձվածք «կյանք տեսնել» իմաստով:

Դարձվածքներ՝ առանց այլ երկում կիրառության օրինակի

18. ԱՆԿԱՆԵԼ ԸՆԴ ԼՍԵԼԻՍ – ականջն ընկնել, լսել. «...մինչեւ ումանք ի դառն դահձացն մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա» (էջ 754): Արդի հայերենում ևս «ականջն ընկնել, ականջովն ընկնել» (1. տեղեկանալ, 2. լսել, ականջը հասնել (լուր, ձայն)) դարձվածք:

19. ԱՆԿԱՆԵԼ ՅՈՏՍ – աղաչել, խնդրել. «Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, եւ աղաչէր խաղապատելով՝ զի մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ» (էջ 595): Արդի հայերենում կա նույնիմաստ «ոտքերը ընկնել» դարձվածք:

20. ԱՆՅԱՆԵԼ ԸՍՏ ՄԱՀՄԱՆՆ – չափի մեջ մնալ, թույլատրելին, պատշաճությունը չպահել. «Եւ ամենայն արարածք անբանութեամբ կատարեն զիրամանս պատուիրանի նորա, եւ ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրենաց» (էջ 559): Արդի հայերենում կա «սահմանն անցնել» (պատշաճության կանոնները չպահպանել, անպատշաճ բան անել):

21. ԶՄԻՏՍ ՈՒԾԱՑՈՒՑԱՆԵԼ – սիրտը սառեցնել, մի բանից կտրել, հեռացնել. «...գտուրբ եպիսկոպոսացն զմիտս եւս ուծացոյց ի նոցանէ, եւ զամենայն զաւրսն Յունաց յերկբայս արար յուխտէն» (էջ 628): «Ուծացուցանել» բայն ունի սառեցնել, օտարացնել իմաստները, իսկ «միտք» բառը գրաբարում հաճախ նաև «սիրտ» բառի գործառույթով է հանդես գալիս, ուրեմն կարելի է ասել, որ այս կապակցությանը համարժեք է

արդի հայերենի «սիրտը պաղել» (սերը նվազել, այլևս չսիրել, սառնություն զգալ դեպի մեկը) դարձվածքին, միայն պատճառական բայով:

22.ԸՍՏ ՁԵՌՆ ԵԼԱՆԵԼ – իշխանության տակից դուրս գալ, խուքից դուրս գալ. «...չէր որ ամենեւին, որ իշխեր ըստ ձեռն նորա ելանել» (էջ 622): Արդի հայերենում կա նույնիմաստ «ձեռքից ելնել», «ձեռքից դուրս գալ», «ձեռքից գնալ»:

23.Ի ՄԵՁ ԳԱԼ – մեջտեղ բերել, մեջ բերել. «...ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին եւ գլխատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մեջ եկեալ ընթերցան...» (էջ 603): Արդի հայերենում՝ «մեջտեղ բերել, մեջ բերել»:

24.Ի ՄԷՁ ԱՆԿԱՆԵԼ – մեջ ընկնել, միջամտել, խանգարել. «...մի՛ որ չար անջրպետ ի մեջ անկեալ զմեզ քակեսցէ ի սմանէ» (էջ 596): Արդի հայերենում՝ «մեջ ընկնել»:

25.Ի ՍՈՒԳ ԼԻՆԵԼ – սգի մեջ լինել, սգալ. «Ընդ նոսին դառնացեալ լսողք եւ տեսողք յանմխիթար սուզ լինէին ամենքեան» (էջ 583): Արդի հայերենում՝ «սուգի մեջ լինել»:

26.ԿԱՆԳՆԵԼ ԿԱԼ Ի ՎԵՐԱՅ ՈՏԻՑ – ոտքերի վրա հաստատուն կանգնել, սեփական ուժերին ապավինել. «...իսկ սա կամաւք գորեալ ապականեցաւ, եւ անձամբ եւս ոչ կարէր կանգնել, կալ ի վերայ ոտից» (էջ 555): Այս կապակցության ուղիղ իմաստով կիրառություններ կան և՛ Աստվածաշնչում, և՛ Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում, սակայն փոխաբերական իմաստով կիրառություն մեզ չհաջողվեց գտնել: Արդի հայերենում կա «ոտքի (ոտքերի) վրա կանգնել» (հաստատուն վիճակ ունենալ, այդպիսի վիճակի հասնել) (Պ. Բեդիրյանի բառարան):

27.ՀՈԳԻՈՅ ԱԿՆ – ներքին զգացողություն. «...հոգւոյն աչաւք տեսանէ զաներեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական...» (էջ 647): Արդի հայերենում կա «հոգու աչքեր» դարձվածք «ներըմբոնում, ներզգացողություն» իմաստով, իսկ վերը բերված օրինակներում՝ նույնիմաստ «աչք մտաց» (էջ 718): Եթե նկատենք, որ գրաբարում «հոգի» և «միտք» բառերը հոմանիշ են¹⁹, հաճախ կիրառվում են մեկը մյուսի իմաստով, ապա կարող ենք ասել, որ ունենք դարձվածային տարբերակներ:

28.ՎՐԻՊԵԼ Ի ԿԵՆԱՅՆ – զրկվել կյանքից. «Ձի ոյք էին ի խաւարի, եկն առ նոսա լոյսն ճշմարիտ. կուրացեալք վրիպեցան ի կենացն, իսկ որք ընկալայքդ հաւատովք, որդի էք...» (էջ 651): Արդի հայերենում կա «կյանքից զրկվել» դարձվածք՝ «1. սպանվել, մեռնել, 2. աշխարհիկ կյանքով չապրել» իմաստներով:

29.ՏԱՆԵԼ ՉՆԵՂՈՒԹԻՒՆ – կարիքի մեջ լինել, նեղություն կրել. «Եւ այնպէս մեծաւ խնդութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենեւին ոչ որ տրտունջ հայիոյութեան ի բերանոյ նոցա լուաւ» (էջ 752, նաև էջ 666): Ար-

¹⁹ Տե՛ս Պ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006, էջ 485: Հմմտ. ՆՀԲ. «միտ» բառի բացատրությունը, էջ 281:

դի հայերենում իբրև դարձվածք արձանագրված է «նեղություն կրել»-ը:

30.ՏԱՆԵԼ ՅԱՅՊԼ ԿԱՏԱԿԱՆԱՑ – ծաղրի առարկա դարձնել. «...եւ մի՛ տար զեկեղեցի քո յայսն կատականաց անարէն իշխանիս այսորիկ» (էջ 574): «Գրաբարի դարձվածաբանական բառարան»-ում իբրև դարձվածք է ներկայացված «այսն կատականաց – ամօթ, խայտառակութիւն», կարծում ենք՝ սա էլ կարելի է դարձվածք համարել:

Գ. Վերախմաստավորված կապակցություններ, որոնց դարձվածք լինելը վերջնականապես հիմանավորված չէ:

Մրանք կարող են լինել ուղղակի փոխաբերական իմաստով կիրառություններ, պատկերավոր արտահայտություններ:

1. ԱՆԿԱՆԵԼ ԸՆԴ ՏԵՍԼԵԱՄԲ ԱԿԱՆ – երևալ. «Ոչ ձեւանայ ի տեսիլ տարբեղէն եւ ոչ անկանի ընդ տեսլեամբ ական» (Եղիշէ, էջ 552, Բ եղանակ, 138), արևելահայերեն թարգմանությունը՝ «Տարբեղէն կերպարան չի ընդունում և այքի տեսողության չի ենթարկվում»²⁰ (էջ 26):

2. ԱՆԿԱՆԵԼ Ի ՍՏԲԿՈՒԹԻՒՆ – ստրկացվել. «...ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յաւտարութեան» (էջ 633), այս օրինակը ՆՀԲ-ն տալիս է «անկանել» բայի իմաստներից մեկի՝ «մատնիլ, պաշարիլ, վարիլ, բերիլ»-ի համար և ամենայն հավանականությամբ դարձվածք չէ:

3. ԱԻՐՀՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ Ի ԲԵՐԱՆ ԻՄ – օրհնել մեկին. «Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ, հանապազ արհնութիւն նորա ի բերան իմ» (էջ 731), արևելահայերեն թարգմանությունը՝ «Կօրհնեմ տիրոջը ամեն ժամանակ, նրա օրհնությունը միշտ իմ բերանում է» (էջ 125):

4. ԴՆԵԼ Ի ՎԵՐԱՅ – վրան դնել, ավելացնել, այդ ամենին գումարել. «Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչեւ զհարց եւ զհաւուց եւ զիր արարս եւ զգարդս կանանց եւս եղ ի վերայ եւ ետ» (էջ 683):

5. ԶԱՆՈՒԱՆՍ Ի ԴՊՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ԳՐԵԼ – «...որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին» (էջ 659, Ե եղանակ, 167), արևելահայերեն թարգմանությունը՝ «Անունները գրեցին կյանքի մատյանի մեջ» (էջ 86):

6. ԶՄԻՏՍ ԱԾԵԼ Ի ՅԱՍՈՒՄՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱԾԵԼ Ի ԲԱՐԿՈՒԹԻՒՆ – բարկացնել. «...եւ զմիտս թագաւորին ածէին ի ցատումն բարկութեան» (էջ 687): ՆՀԲ-ում «ածեմ» բայի համար տրված է նաև «ձգել, շարժել, հասուցանել, վերածել. *Ածել ի բարկութիւն, ի զղջումն»:

7. ԸՄՊԵԼ ԶԲԱԺԱԿՆ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ ՄԱՀՈՒ – «...մեծաւ անարգանաւք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու» (էջ 632).

²⁰ Եղիշէ, Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Եր. Տեր-Մինասյանի, Եր., 1994:

արևելահայերենը՝ «...մեծ անարգանքով նրան պետք է խմացնեմ մահվան դառը բաժակը» (էջ 71):

8. ԸՆԴ ԱԻՐԻՆԱԻՔ ՄՏԱՆԵԼ – հնագանդվել, ենթարկվել օրենքին. «...եւ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին արինաւք մտանէին» (էջ 524, նաև էջ 527): Այս կապակցության մեջ ունենք «ընդ» նախդրի գործածություն գործիական հոլովով դրված գոյականի հետ, որն արտահայտում է ենթարկում, հնագանդում²¹: Հարց է առաջանում՝ կապակցության իմաստը դարձվածայի՞ն է, թե՞ ամեն դեպքում պայմանավորված նախդրի իմաստային առանձնահատկությամբ: Կապակցության այլ կիրառություններ ևս կան, օրինակ՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկում՝ «...որոյ մտեալ ասէ ընդ արինաւք, զի...»²² (էջ 1488):

9. Ի ԲԱՆՍ ԵԼԱՆԵԼ – խոսքն ընդունել (՝). «...ի նոցա բանս էլեալ թագաւորն, ոչ կամեր անսալ միաբան ուխտին Հայոց...» (էջ 603), արևելահայերեն թարգմանությունը՝ «...նրանց կողմն անցնելով՝ թագավորը չկամեցավ ուշադրություն դարձնել հայերի միաբան ուխտին...» (էջ 54): Մեզ չհաջողվեց գրաբարի բառարաններում գտնել «ելանել» բայի այնպիսի իմաստ, որը կհամապատասխանի ինչպես այս, այնպես էլ հաջորդ օրինակում՝ «ի հրապոյրս էլանել», նրա արտահայտած իմաստին, ուստի կարելի է կարծել, որ վերաիմաստավորված է:

10. Ի ՀՐԱՊՈՅՐՄ ԵԼԱՆԵԼ – հրապուրվել, խաբվել. «Ես գիտեմ, զի ի հրապոյրս առնդ այորիկ էլեալ էք դուք» (էջ 721), արևելահայերեն թարգմանությունը. «Ես գիտեմ, որ դուք այդ մարդու կողմից խաբված եք» (էջ 120):

11. Ի ՄՏԱՅ ԽՈՐՀՐԴԻ ԼԻՆԵԼ – մտորումների, մտածումների մեջ լինել. «Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր եւ նեղէր ի միտս...» (էջ 660, նաև էջ 690):

12. Ի ՄԱՆԱԼ ԶՊԱՏԻԻ ԱՆՁԻՆ – մեկի հարգը, արժեքն իմանալ. «-Գովութիւն, գոր էտու քեզ յառաջ, ոչ իմացար զպատիւ անձին քոյ» (էջ 726), արևելահայերենը՝ «Առաջ քեզ շատ գովասանք տվի, բայց քո անձի պատիվը չիմացար» (էջ 123):

13. Ի ՄԱՆԱԼԻ ԱՐԵԳԱԿՆ – Քրիստոս. «...հոգւոյն աչաւք տեսանէ զաներեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական...» (էջ 647): Արևելահայերենում նույն «իմանալի արեգակ» կապակցությունն է՝ բացատրությամբ, որ արտահայտությունը գործածված է Քրիստոսի համար (էջ 80, էջ 148՝ ծնթ. 78):

14. ԿԱՐԾԻՔ ԼԻՆԵԼ Ի ՄԻՏՍ – հիշել, մտածել. «Բայց ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա» (էջ 700), արևելահայերենում թարգմանված է «մտները բերին»: ՆՀԲ-ն «կարծիք» բառի համար, ի թիվս այլ իմաստների, ունի

²¹ Տե՛ս Ն. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003, էջ 215:

²² Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց («Մատենագիրք հայոց», Բ. հտ., Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1295-1736:

«մակաբերություն, միտք, խորհուրդ, կասկած, երկբայություն»։ գուցե այստեղ հենց այս իմաստով է գործածված, իսկ ամբողջ կապակցությունը նշանակում է «մտածել»։

15. ՀԱՍՍԱՆԵԼ ՎԱԽՃԱՆ ԿԱՏԱՐԱԾԻ ԿԵՆԱՑ – մահանալ. «...ի նմին ժամանակի անդէն վաղվադակի հանասէր վախճան կատարածի կենաց նորա» (էջ 603), արևելահայերեն թարգմանության մեջ՝ «...այդ նույն ժամանակ շուտով հասավ նրա կյանքի վախճանը...» (էջ 54), նաև գործածված է «հասանել վախճան կենաց» (էջ 756) տարբերակով։

16. ՁԱՅՆ ԲԱՌՆԱԼ – ձայնը բարձրացնել, բողոքել (՝). «Յայնժամ երանելի նախարարքն առ հասարակ զձայնս իրեանց բարձին եւ ասեն յանդիման ամենեցուն» (էջ 572), արևելահայերեն թարգմանությունը՝ «Այդ ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձրացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ» (էջ 36)։ Այս օրինակից և պարբերությունից հստակ չի հասկացվում՝ ուղիղ, թե փոխաբերական իմաստով է կիրառված կապակցությունը։ Ամեն դեպքում, եթե փոխաբերական է, ուրեմն դարձվածք է արդի հայերենում ևս կա «ձայն(ը) բարձրացնել» (1. խրոխտալ, չարացած կամ սպառնական, բարկացած խոսել, 2. բողոքել, տրտունջ հայտնել)։

17. ՁԱՆՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ ՉԼՍԵԼԻՄ – ձանձրացնել. «Եւ դուք զմի զայն երբէք ոչ յիշեցէք, այլ հանապազուր ձանձրացուցէք զլսելիս իմ, խաւսելով զնոցանէ զամենայն չարութիւն» (էջ 617)։

18. ՄՍԱՆԵԼ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ – փորձության մեջ ընկնել. «...զի կամաւք չոգան մտին ի փորձութիւնն...» (էջ 752), արևելահայերենը՝ «...որ կամովին գնացին, փորձության մեջ ընկան...» (էջ 136)։

19. ՆԵՂՈՒԹԻՒՆՍ ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ Ի ՎԵՐԱՅ ԱԾԵԼ – նեղություն պատճառել. «...ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ ածելով...» (էջ 570)։ Արդի հայերենում դարձվածք է համարված «նեղություն տալ»-ը։ Այս կապակցությունը ներկայացնում ենք այստեղ և ոչ Բ. խմբում, քանի վստահ չենք՝ արդի հայերենում «նեղություն տալ»-ը կարելի՞ է դարձվածք համարել, թե՞ սովորական հարադրական բայ։

20. ՆՁՈՎՄ ԱՐԿԱՆԵԼ – նզովել. «...զի զամենայն, որ զայս լուեալ զիտասցէ, նզովս ի հետ արկցէ եւ մի լիցի ցանկացող գործոց» (էջ 100), արևելահայերեն թարգմանությունը՝ «...որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի» (էջ 684)։ Կապակցության այլ օրինակ չենք գտել, իսկ ՆՇԲ-ում «նզովք» բառի օրինակներում տրված է նաև այս նախադասությունը (հետևաբար ՆՇԲ-ն կազմողները այն առանձին միավոր չեն համարել)։

21. ՓՈԽԱԴԴԵԼ ՅԵՐԿՐԷ Ի ՅԵՐԿԻՆՍ – մահանալ. «...այսպէս փոխադրեալ եղև յերկրէ ի յերկինս» (էջ 750), արևելահայերենում թարգմանված է բառացի՝ «...այնպես էլ երկրից երկինք փոխադրվեց» (էջ 135)։

Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա նույնիմաստ «փոխադրել առ Քրիստոս» դարձվածքը: Հարցն այն է, որ ըստ ՆՀԲ-ի՝ «փոխադրեմ» ունի նաև «փոխիլ յաշխարհէ» իմաստը, իսկ քանի որ այլ օրինակ չենք գտել, կասկածում ենք, որ այն կարող է ոչ թե դարձվածք լինել, այլ պատկերավոր արտահայտություն՝ հիմնված բայիմաստի վրա:

Ընդհանուր հաշվով ստացվում է արդեն հայտնի դարձվածքների 4 տարբերակ, 30 նոր դարձվածք, 21 վերաիմաստավորված բառակապակցություն: Եթե երրորդ խումբը մի կողմ թողնենք, ապա կունենանք բառարաններում դեռևս չարձանագրված 34 լիարժեք նոր դարձվածք: Ըստ խոսքիմասային պատկանելության՝ գերակշիռ մասը՝ 32 դարձվածք, բայական է, միայն 2-ը՝ գոյականական՝ **այք մտաց, հոգւոյ ակն**: Այս դարձվածքների կառուցվածքային-կաղապարային վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք կազմված են գրաբարի բառակապակցության օրինաչափություններից համապատասխան, որն է առանձնահատկություն կամ շեղում չունեն: Ըստ բաղադրիչների քանակի՝ 12-ը երկբաղադրիչ են, 22-ը՝ եռաբաղադրիչ:

Երկբաղադրիչները պատկանում են հետևյալ կաղապարներին՝
ա. ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ – 10 դարձվածք. անկանելի ձև (էջ 664, 692), անկանելի յախտ (էջ 683), անկանելի յոտ (էջ 595), ասել ընդ միտ (էջ 690), անցանել ըստ սահման (էջ 559), ինույ բերան (էջ 616), վրիպելի կենացն (էջ 651), տանել զնեղութիւն (էջ 752), տեսանել արեւ (էջ 663):

բ. ԳՈՅԱԿԱՆ+ԲԱՅ – 8 դարձվածք. արիւն հեղուկ (էջ 590, 686), զմիտս ուծացուցանել (էջ 628), ըստ ձեռն ելանել (էջ 622), ի բերանոյ ելանել (էջ 715, 753), ի ձեռին ունիմ (էջ 591), ի սուգ լինել (էջ 583), համարս տալ (էջ 548), յանդորր հանել (էջ 637):

գ. ԳՈՅԱԿԱՆ+ԳՈՅԱԿԱՆ – 2 դարձվածք. այք մտաց (էջ 718), հոգւոյ ակն (էջ 647):

դ. ՄԱԿԲԱՅ+ԲԱՅ – 2 դարձվածք. ի մէջ անկանել (էջ 596), ի մէջ գալ (էջ 603):

Եռաբաղադրիչները պատկանում են հետևյալ կաղապարներին՝
ա. ԳՈՅԱԿԱՆ+ԳՈՅԱԿԱՆ+ԲԱՅ – 2 դարձվածք. բարկութիւն սրտմտութեան հեղուկ (էջ 533), զանձն ի մահ մատնել (էջ 568):

բ. ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ+ԳՈՅԱԿԱՆ – 3 դարձվածք. անկանիլ գուր ի սիրտ (746), տալ զանձն ի մահ (էջ 746), տանել յայս կատականաց (էջ 574):

գ. ԴԵՐԱՆՈՒՆ+ԴԵՐԱՆՈՒՆ+ԲԱՅ – 1 դարձվածք. ինքեանք ինքեանց ձեռաւք (էջ 599):

դ. ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ+ԴԵՐԱՆՈՒՆ/ԳՈՅԱԿԱՆ²³ – 3 դարձվածք. լի-

²³ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դարձվածքների մի բաղադրիչը կամընտիր է փոփոխական, կաղապարում միաժամանակ ներկայացնում ենք այն հնարավոր խոսքի մասերը, որոնք կարող են կիրառվել տվյալ կառուցում՝ առանց իմաստի փոփոխություն առաջացնելու: Դարձվածքի կամընտիր (ֆակուլտատիվ) անդամների մասին մանրամասն տե՛ս **Պ. Բեղիբյան**, նշվ. աշխ., էջ 93-99:

նել ընդ ձեռամբ ոմամբ (էջ 605, 653), լինել ի բանի ուրումն (էջ 630), տեսանել աչաւք (ոմամբ) (էջ 634, 711):

ե. ԳՈՅԱԿԱՆ+ԴԵՐԱՆՈՒՆ/ԳՈՅԱԿԱՆ +ԲԱՅ - 1 դարձվածք. ականջաւք իւրեանց լսել (էջ 761):

զ. ԳՈՅԱԿԱՆ+ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ/ԴԵՐԱՆՈՒՆ - 1 դարձվածք. անկանել (ի վերայ ումեմն) (էջ 594):

է. ԲԱՅ+ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ - 1 դարձվածք. կանգնել կալ ի վերայ ոտից (էջ 555):

Այսպիսով, քննելով գրաբարի դարձվածքների որոշման սկզբունքները և առաջարկելով կիրառել արդի հայերենի դարձվածքների հետ համեմատությունը ևս իբրև օժանդակ միջոց՝ Եղիշէի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկի բառապաշարից դուրս ենք գրել 34 նոր դարձվածք, որոնք գրաբարի բառարաններում արձանագրված չեն: Ընդ որում՝ այդ դարձվածքներից 27-ը գրեթե նույն կազմությամբ (ձևաբանական փոփոխությունները չհաշված) համարժեքներ ունեն արդի հայերենում: Ձևաբանական և կաղապարային-կառուցվածքային դասակարգումները ցույց են տալիս, որ նոր դարձվածքները համապատասխանում են գրաբարի բառակապակցության և դարձվածային կաղապարների օրինաչափություններին: Դարձվածքների մեծ մասը բայական է: Կարծում ենք՝ այս միավորների վերհանումը և դրանց դարձվածք լինելը հիմնավորելը, որը մեր աշխատանքի գլխավոր խնդիրն է, կարևոր են ինչպես Եղիշէի երկի բառապաշարի և լեզվաոճական առանձնահատկությունների ճիշտ գնահատմանն ուղղված հետազոտաշխատանքների, այնպես էլ ընդհանրապես գրաբարի դարձվածային հարստության ներկայացման ու արժևորման համար: Բացի այս լիարժեք դարձվածքներից՝ առանձնացրել ենք նաև 20 վերաիմաստավորված կապակցություն կամ պատկերավոր արտահայտություն, որոնց դարձվածք լինելը մեր ունեցած փաստերով վերջնականապես ապացուցված չէ, սակայն, նկատի ունենալով գրաբարի դարձվածաբանության զարգացման ընթացքը, նպատակ ունենք ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել հետագա քննության համար:

Բանալի բառեր – գրաբարի դարձվածքներ, Եղիշէ, բառապաշար, բառարանում չարձանագրված դարձվածք, կառուցվածքային քննություն, ձևաբանական դասակարգում

КНАР АРУТЮНЯН – Фразеологизмы в книге Егишэ «О Вардане и войне армянской»», не представленные в словарях древнеармянского языка. – Изучение древнеармянских фразеологизмов имеет относительно краткую историю, и некоторые вопросы ещё не решены полностью. В нашей работе изучаются принципы выделения древнеармянских фразеологизмов на примере использованных в труде «О Вардане и войне армянской» (V в.) единиц, которые не включены в словари древнеармянского языка. В статье представлены 34 таких фразеологизма, дан их структурный и морфологический анализ, аналоги в современном армянском. Это приводит к заключению, что перед нами полноценные фразеологизмы,

их необходимо включить в словари. Кроме того, в статье рассмотрены около 20 оборотов, которые можно считать и фразеологизмами, и просто выразительными словосочетаниями.

Ключевые слова: древнеармянские фразеологизмы, Егхисе, лексика, фразеологизмы, не вошедшие в словари, структурный анализ, морфологическая классификация

KNAR HARUTYUNYAN – Idioms in “History of Vardan and the Armenian war” by Eghishe not Included in the Old Armenian Dictionaries. – The study of Old Armenian idioms has a relatively short history, and some issues have not fully been solved yet. In our article, we study the principles of distinguishing Old Armenian idioms on the example of those used in the “History of Vardan and the Armenian War” by the 5th-century historian Yeghishe and not included in Old Armenian dictionaries. We introduce 34 new idioms, give their structural and morphological analysis, find their analogues in the Modern Armenian language. Thus, the study leads us to the conclusion that these units are full-value idioms and should be included in dictionaries. We also examine about 20 units, which can be idioms or expressive combinations.

Key words: Old Armenian (Grabar) idioms, Eghishe, lexicon, idioms not included in the dictionaries, structural analysis, morphological classification

Ներկայացվել է՝ 28.09.2020, Գրախոսվել է՝ 16.10.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020